



**ՀՄՀ-Հայաստանը պայմանագրեր կնքեց Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի առաջին փաթեթի 6 լոտերի շինարարության հաղթող ճանաչված կապալառուների հետ**

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան ՊՈԱԿ-ը 6 պայմանագիր կնքեց Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի առաջին փաթեթի վեց լոտերում ներառված վերականգնման ենթակա ընդհանուրը 273 կմ գյուղական նշանակության ճանապարհների վերականգնման աշխատանքների շինարարության իրականացման նպատակով, որ կներառի Հայաստանի գրեթե բոլոր մարզերը: Ստորագրման արարողությունը տեղի ունեցավ օգոստոսի 1-ին ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գրասենյակում՝ Գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանի, ՀՄԿ հայաստանյան ներկայացուցիչ Ալեքս Ռասինի և կապալառու կազմակերպությունների մասնակցությամբ:

Հաղթած կապալառու կազմակերպություններն են՝

1. «Կապավոր» ՍՊԸ, «Կոտայքի ՃՇՇ» ՍՊԸ, «Ա.Ա. Բ. Պրոեկտ» ՍՊԸ համատեղ ձեռնարկությունը, որը կվերականգնի 57.9կմ ճանապարհ Կոտայքի և Արագածոտնի մարզերում,
2. «Թալինի ԱՏՃ» ՓԲԸ, «Ճանշինվարպետ» ՓԲԸ, «Կուարլինի» ՍՊԸ, «Ասֆալտագործ» ՍՊԸ համատեղ ձեռնարկությունը, որը կվերականգնի 66կմ ճանապարհ Արագածոտնում և Արմավիրում,
3. «Արգիշտի -1» ՍՊԸ, որը կվերականգնի 43.6 կմ ճանապարհ Տավուշում,
4. «Կապավոր» ՍՊԸ, «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ, «Լոռիի ՃՇՇ» ՓԲԸ, «Սևանի ՃՇՇ» ՓԲԸ համատեղ ձեռնարկություն, որը կվերականգնի 37.3կմ ճանապարհ Գեղարքունիքում և Լոռիում,
5. «Կապավոր» ՍՊԸ, «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ համատեղ ձեռնարկություն, որը կվերականգնի 40.5կմ ճանապարհ Տավուշում և Գեղարքունիքում,
6. «Արարատ Ճանշին» ՍՊԸ, որը կվերականգնի 27.7կմ ճանապարհ Արարատում, Վայոց Ձորում և Սյունիքում:

Կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքն է 15,524,974,201 ՀՀ դրամ (51.5 միլիոն ԱՄՆ դոլար):

ՀՀ կառավարությունը պետական բյուջեից հատկացրել է 16.8 միլիոն ԱՄՆ դոլլար տվյալ ճանապարհների շինարարական աշխատանքների առաջին փուլի իրականացման համար (2008թ.-ի օգոստոս-դեկտեմբեր ժամանակահատվածում): Ճանապարհների շինարարության վերջնաժամկետը սահմանվել է 2010թ. հունիսի 30-ը:

Այս պայմանագրերի, ինչպես նաև՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել

[www.mca.am](http://www.mca.am)

###

*Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար:*